182

Մալաթիա-Սեբաստիա համայնքի
ղեկավար պրն. Դ.Օհանյանին

Հարգելի պ-ն Օհանյան.

«Ալեքսանյանների ընտանիք» ԲՀԿ-ն շուրջ 2 ամիս է, ինչ հովանավորում է համայնքի Վ.Գևորգյանի անվան «Սեբաստիա» կրթահամալիրին՝ հոգալով բազմաթիվ հարցեր՝ այդ թվում անվճար սննդի, կահավորման, վերանորոգման, աշխատակիցների աշխատավարձի բարձրացման և այլն:

Հարգելի թաղապետ, «Ալեքսանյանների ընտանիք» ԲՀԿ-ն հետամուտ է էլ ավելի ընդլայնելու բարեգործական ներդրումները՝ նպատակ ունենալով թեթևացնելու համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների հոգսը՝ նրանց ազատելով մանկապարտեզ հաճախող երեխաների համար տրվող վարձավճարներից:

Ինչպես նաև, մեր առջև խնդիր ենք դրել կրթահամալիրը դարձնել բարեկարգ, ժամանակակից չափանիշներին համապատասխան, իրոք երեխաների համար հրաշալի մի պարտեզի, որտեղ կստեղծվեն հնարավոր բոլոր պայմանները՝ առողջ ապրելակերպի, ժամանակակից կրթության և դաստիարակության հա մար:

Որպեսզի մեր նպատակները ժամանակավոր բնույթ չկրեն, խնդրում ենք կրթահամալիրը երկարաժամկետ անհատույց օգտագործման հանձնել «Ալեքսանյանների ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպությանը, որն իր հերթին պարտավորվում է հիմնանորոգել դպրոցի և մանկապարտեզի մասնաշենքերը, ամբողջությամբ կահավորել կրթահամալիրը ժամանակակից կրթօջախի պահանջներին համապատասխան:

«Ալեքսանյանների ընտանիք» բարեգործական
հասարակական կազմակերպության նախագահ Ս. Ալեքսանյան